

ԲԱԺՆԵԳԻՆ

Ի Պուլկարիա

Տարեկ. 10 ֆր.


վեցամս. 5 "

Արտասահման

Տարեկ. 12 ֆր.

վեցամս. 6 "

ԿԱՆԻՍԻԿ



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՊԱՏԻՍՏԱՆԻ

ՊԵՏԱԿ

Գրութիւնք ետ
չեն տրուիր:

Հասցէ

DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE

ՇԱԲԱԹԱՎԱՆԴԵՍ. ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԽԵԹՅԱԿԱՆ

Դ. ՏԱՐԻ

ՄԱՅԻՍ 13 ՇԱԲԱԹ 1900

ԹԻԻ 162

ՄԵՐ ԿՐԹԱՐԱՆՆԵՐԸ

Մէկը միւսէն աւելի ապարդիւն չառ մը կըրթական տարեշրջաններ բոլորել կարծես ճակատադրային դժբաղդութիւն մը զարձած է մեր ազգին համար:

Մեր վարժարանական գործերը չառ քիչ բացառութեամբ՝ հակառակ իրենց կենսականութեանը, կ'առաջնորդուին այն ոլորմանի քայլերով, որ անապատին մէջ մոլորուող ուղևորին աննպատակ երերտկումները և կամ ծովուն ալիքներուն մատնուած անդեկ նաւերուն արդահատելի վիճակը կը յիշեցնեն մեզ:

Ուղևորը՝ իր աչքը յառած անմոյրած իր հորիզոնին վրայ՝ մերթ խուճապող ու մերթ դանդաղող քայլերով, աւազի անհունութեանը մէջ կը կորսնցունէ իր գնացքին ուղղութիւնը. ճիշդ այսպէս ալ մեր վարժարանական զոհերը իրենց անմեղուկ աչքը յառած կրթական մարտու ու բարձրագոյն խտէալի մը, իրականին մէջ միշտ փոշերէ և դատասկներէ շրջապատուած կը գտնեն ինքզինքնին և շատ շատ շալակնին առած իմաստակութեան տոպրակը, արիւնոտ ոտքերով դուրս կուգան խամրոցներէն, առանց երբէք կարենալ հասնելու իրենց պաշտելի իտ'ալին:

Կրթական սուրբ անգաստանին մէջ ցցուած այդ փուշերը՝ ամենքն ալ դատապարտելի, ամենքն ալ արմատէն հնձելի, այլապէս են դոյնով ու դիրքով, այնպէս որ չենք կարող մէկ խօսքով ներկայացնել զանոնք:

Տեղ մը հոգաբարձուները, տեղ մը տնօրէն-հիմնադիր կոչուածները և ուրիշ տեղ մըն ալ վարժապետներն են որ սուսիկ բուսիկ կը շահագոր-

ծեն մեր կրթական գործերը, յաւիտենական ամուլով համը օժտելով ազգին մտաւորական ուժը:

Մօտ է ներկայ տարեշրջանին վախճանն ալ. վատահ ենք որ ամեն տեղէ պիտի լսենք վնասը վնասը հարցաքննութեանց և անոնց յարակից նաշխուն պարզեւաշխու թիւններու հզօր արձագանքը, ուր տնօրէնները խօսած ըլլան պօռնոտ տեղեկալիրներու հետ խել մ'ը սնամէջ ու ինքնագով խօսքեր, եւ ուր աշակերտներն ալ եկած ըլլան մէկ քանի թովով ճառերով իրենց ծնողաց աչքին փոշի փչել եւ այսպէսով փակել որբերգախառն գտնելի մ'ը 1900ի վարապոյրն ալ:

Արդ ինք մի՞ պատէք բնաւ: Տարիներու երկար շարք մը՝ իր բացասական պատասխանով, ապացուցած է արդէն Պուլկարիայ հայութեան մեծ մասին անհասկացողութիւնը, որմէ օգտուելով է որ մեր հոգաբարձուները և մանաւանդ մեր պատուելիները այսքան ատենէ ի վեր շարունակած են իրենց տխուր դերը մեր է՛ն սուրբ, է՛ն նուիրական տաճարին մէջ: Ու հիմա բնաւ չենք տեսներ հանդարտեցուցիչ պարագայ մը ապագայ տարիներու շարքին համար ալ:

Ինչ որ եղաւ երէկ, նոյնը պիտի ըլլայ և վաղը: Մեր վարժարաններու դասընթացքը յաւիտենական է. եթէ տղադ յիշուն տարի ալ զրկես վարժարան, բան մը ըլլալիք չունի, այն գերազանց պատճառով որ, զինքը շրջապատողները արդէն բան մը չեն թէ՛ բարոյապէս և թէ՛ մտաւորապէս, մեծ մասամբ ապիրատներ, որոնք իրենց օրապահիկէն նեղուելով է որ դրկած են այդ ասպարէզը, իբրեւ ամենէն դիւրագրաւ ասպարէզը:

Մենք երբէք չպիտի ունենանք ծրագրի համամատ ընթացաւարտ մը, ինչպէս չենք ունեցեր 22 տարիներէ ի վեր, յորում Պուլկարական վեհաճն գրօշը տուեր է մեզ ամեն ազատութիւն, տիրող տարրին հետ համընթացօրէն զարգանա-

լով, ընկերութեան մէջ փայլուն դերք մը գրաւելու համար:

Այլ ափսոս, հակառակ ծախսուած միջոցներն ոչինչ չենք ունեցեր եւ անապատը մնացեր է միշտ անապատ իր ամեն յուլիչ ու սարսաղ-դեցիկ երեւոյթներովը: Մի գաղափարովք զիս, եթէ իբրեւ յոռետես ոք այսօրու ընէ գուժեմ ձեզ որ այս ուղղութեամբ նոյն միջոցները պիտի ծախսուին նաեւ մեր առջեւ գտնուող տարիներու ընթացքին մէջ և արգիւնքը պիտի ըլլայ միշտ խոշոր կլորակը, որուն զեռօ անունը կուտան:

Իցիւ թէ սխալած ըլլայի:

ԾԱՆՕԹ

ԱՉԳԱՅԻՔ

Անցեալ ուրբաթ օրուան խորհրդակցութեան համեմատ, այս օրերս Ազգ. Պատրիարքարանը 600 ոսկիի նպաստ մը պիտի զրկէ գաւառները. այդ գումարէն 200ական ոսկի պիտի տրուի Բաղէշի ու Տիարպէքիւրի, և 100ական ոսկի ալ Մշոյ և Շապին գարահիւարի համար:

—Նպաստից յանձնաժողովը տակէ առաջ հարկւր ոսկի զրկած էր Եդեսիա: Անցեալ Զատիկ չաբաթներուն՝ այդ գումարին բաշխումը լրացեր է: Այդ բաշխումը կատարուած է հետեւեալ կերպով.

Մաս մը զրկուած է կարօտ թեմի մը և մնացածով 694 անձերու ցորին բաժնուեր է, իւրաքանչիւրին տրուելով 17 ու կէս զրուշ արժէք ունեցող 15 օխա սերմնացու:

—Վանայ մէջ կարօտութիւնները շատ աւելի մեծ են, մօտ օրերս սկսեր է նպաստ բաշխուիլ հացակարօտ գիւղերուն: Այդ նպաստները կը բաշխուին ամերիկացի միսիոնար Տոքթօռ Բէյնոլտի կողմէ, որ վերջերս օտար մարդասէրներու դիմում ընելով յաջողած էր 450 ոսկիի գումար մը հաւաքել:

—Երուսաղէմի միաբանութեան քարտէսը և նո-
հրդ.—Երուսաղէմէն կը գրեն 24 թուականով. «Աշխարհամատրան կիրակի իրիկունը Ս. Յակոբայ Տա-
ճարին մէջ, ժամերգութենէն ետքը, համօրէն

նշեցեալներու և Ս. Ուխտիս երջանկայիշատակ բարերարներու համար սրտառուչ հոգիհանգիստ մը կատարուելով՝ որուն կը նախագահէր Ամեն Տ. Յարութիւն Ս. Պատրիարքը Հայրը, յիշենի եկեղեցւոյն բաշխուեցաւ դրամական տարեբաժինը, ըստ սովորութեան, բոլոր միաբանական խումբին, սկսեալ Ս. Պատրիարքէն որուն բաժինն է կէս ֆըրանս. ոսկի, եպիսկոպոսներէն, վարդապետներէն—առջիններուն չորս՝ իսկ վերջիններուն երկու ֆըրանս. ոսկի—մինչեւ յետին յոյժաւ միաբանը որ կը ստանայ կէս ֆրանսական ոսկի:

—Բարեյիշատակ Յ. Պարոնեանի եղբայրը Սա-
հակ Պարոնեան՝ նամակ մը զրեւով «Արեւիք» լը-
րագրին կիմացնէ թէ՝ Թիֆլիզի Հայոց Հրատա-
րակչական ընկերութիւնը որ ողբացեալ երգի-
ծաբանին երկասիրութիւնները հրատարակած և
բաւական ալ դրամ չահած էր, հակառակ իր տը-
ւած խոստումներուն, մինչև հիմա փարա մը զըր-
կած չէ եղեր Պարոնեանի որբերուն. ուստի կը
խնդրէ որ Պատրիարքարանը միջամտէ և Հրա-
տարակչական ընկերութենէն պահանջէ խոստա-
յուած 500 ֆրանքը:

(Կ'երեւի թէ Թիֆլիզի Հրատարակչական ըն-
կերութիւնը՝ տեղական ժողովրդային հետեւեալ
առածին կ'ուզէ հաւատարիմ գտնուիլ.

Հողն ի Մասիս,
Զուրն յԱգիւիտ,
Սուտն ի Թիֆլիս:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ

ԵԳԻՊՏԱՀԱՅ ԲԱՐՔԵՐ

Գահիրէ, 21 Ապրիլ 1900

Տեղական բարքերու մասին Ձեզ գրել խոստացած էի. շիտակը, եթէ խօսքս յարգելու պարտաւորութիւնը չըլլար, չ'ազ պիտի անցնէի այստեղի արտակարգ սովորութիւններուն վրայ գրել, մանաւանդ ներկայ խաւնի-
նի ատեն, ուր առանց նեղուելու այդ բարքերը տեղն ի տեղը որակել շատ դիւրին գործ չէ: Բայց հիմա հակա-
ռակ փարաւորներու երկիրը գտնուելուս, առած խօսքս մաղէշի չպիտի կապեմ, որովհետեւ ինծի իմացուցած էր թէ Պուլկարիոյ մէջ պոլիտիկայի (վազը) փիլիսոփայու-
թիւնը այնչափ առաջ չէ գացած և խոստացուած բան մը կը պահանջուի անշուշտ: Հետեւաբար ժողով մը առջեւ հարկադրուած եմ պահ մը չեղիլ տեղական ընդհանուր կանոնէն և խօսքիս տէրը մնալ: Բայց երբ

արտառոց բան մը տեսնէք: գրութիւններուս մէջ, մի՛ զարմանաք և չափազանցողի մը տեղը մի՛ գնէք զիս, մեղաց տէր կըլլաք. որովհետեւ հոստեղի համար անսովոր բան չկայ: Ամեն ինչ բնական դարձած է:

* *

Չեմ գիտեր, բայց կարծեմ նոր բան մը ըսած չեմ ըլլար. եթէ Նիլի—մուսկոյթի հովիտը տաք և կիզ զիչ կլիմա մը ունենալը իմացնեմ: Սակայն բացարձակապէս աւելորդ չէ անգամ մըն ալ յիշատակել տեղւոյս կլիման, քանի որ այսօր Սահարայի արևուն չափ պայծառ ճշմարտութիւն մ'է որ կլիման գերազանցօրէն կ'ազդէ բարքերուն վրայ, և թէ իրարու հետ մեծապէս առնչութիւն ունին: Ահա այս անտանկի կլիման է որ հարկադրած է Եգիպտացիներին աստիճանի հաճոյակատար ըլլալ իր կեանքին մէջ, եթէ ոչ նիւթապէս գոնէ բարոյապէս, և թէ շատ արգարացի պատճառներով մէկ կողմ նետած է այն ամեն բաները—ինչպէս բարոյական պարտքեր, մարդկային ամեն տարրական օրէնքներ—որոնք յոգնեցուցիչ են Եգիպտացիներին համար: Սակայն անկողնակալ ըլլալու համար փութամ ըսել որ, թէեւ մէկ կողմ նետած է այդ բաները, բայց գիտէ Մասրին (Եգիպտացի) ի հարկին անոնցմէ որուն որ պէտք ունենայ զայն ձևով առնել և գործածել որոշ ժամանակի մը համար իբրև շիւք և օրուան անհրաժեշտ պէտք. ինչպէս ես Օմէնա խրտիվիսալը գացած ատենս պահեստի հազուստներս կը հագնեմ ու վերջն ալ կը հանեմ ու կը պահեմ ի հարկին նորէն մարդու երես կլիլու համար: Տեղական բարքերու մանրամասնութեանը մասնիկ տալ պէտք կըլլայ ինծի քիչ մը տեղւոյս ընտանեկան շըրջանակներուն շուրջը պտըտիլ և կինը ներկայացնել: Չեմ կարծեր թէ չարաճճի մը գտնուի որ կնոջ տրուած նախապատուութեանը համար ծիծաղի. եթէ գտնուի, անոր ալ օնի տուա քի մայի քան:

Հարկաւ գիտէք որ հոս հասարակային երկիր մըն է և տեղացիներն ալ կատարեալ աշխարհաբարոյացի մը, և բնական է որ Եգիպտոսին ալ (միշտ հայերը կ'աղնարկեմ) իր կարգին նոյնը ըլլայ: Նէ՛ ձկուն է իր ամբողջ էութեամբը և իր շրջանակին գերագոյն հեղինակութիւնը և տանը—իր բնակիչներովը—բացարձակ տէրն ու պետը:

Կը հարցնէք ինքնիրեննուդ, գիտեմ, թէ ամենքն ալ այնպէս են. «Շատ քիչ յարգելի բացարձակութիւններ կան», պիտի ըլլայ պատասխանս այս մասին. բայց սա ալ գիտցէք, վերջին գաղթականութիւնը հաշիւիս մէջ չէ:

Հոս կինը բռնաւոր մըն է. բայց այս ձկուն և նրբամիտ բռնաւորութիւնները անպայման կերպով կիշխեն իրենց շրջանակին և իրեններու վրայ հիմնաւոր ճարտարութեամբ, և այդ պատճառով իրենց իշխանութեան սահմանները միշտ խաղաղութեան մէջ են, հակառակ կարծ օրուան մէջ այդ շրջանակները երեցող ալլապան եւ հակասական պատահարներուն: Իսկ բացարձակ եթէ գտնուին ըմբոստներ, ընդ փոյթ աչքէ կիշխան եւ սպասաւորի գերը կ'ստանան:

(Շար.)

ԻՊՆԻ ՍԱՀԱՐԱ

Ս Ի Ր Ա Յ Ի Ն Կ Ա Յ Ծ Ե Ր

ԵՐԿՈՒՔԻՆ ՄԷՋ

Ձեռքս փայփայաւի.

Լեզուս գեղգեղաւի.

Մաշող կործիս սակ

Հագար սառապաւի.

Ահա քէ ինչպէս

Աղուէսներու պէս

Կ'անցնիւ երկոյթի

Կ'էջը սարփագիւ:

Մէկին հիացում.

Իսկ միւսին պաշտում.

Ձեռքերու սեղմում.

Միտք թրթրում.

Այ իրար կ'անցնիւ.

Սա՛ր մոռ ու յերիւի

Փոյք չէ՛ որ ըրան

Մեր լրուիկ վրկան:

Մէկին սուր՝ արհիւ.

Իսկ միւսին սուիւ.

Սուր, սրտ, սուիւ

Երկոյթի գերիւ.

Ժողովե՛ւ ծաղիկներ.

Շիւղե՛ւ փունջիկներ.

Չանե՛ւ անկասկում.

Պրտակներ անշիւում:

Ահա քէ ինչո՛ւ

Իրիկուն սուսու

Սրնդիկներու պէս

Կը կորսուի՛ ես:

Կը մոռնա՛ւ մարդիկ

Երբ գիւ՝ գեղեցիկ

Ձոյգ մը հրեշտակ

Կոյնե՛ւ շարունակ.

Ճա՛հ ճաշս ճի՛ ճա.

Միշտ ի Դօգարճա:

ԱՊՈՒ—ՆԱՏԱՐԱ

ՀԱՐՑ—ՊԱՏԱՍԽԱՆԻ

Հարցում. — Անցեալ շաբաթ օր (մայիս 6) հրատարակուած «Հարժու՛մ»-ին մէջ ի՞նչ կար.

Պատասխ. — Չորս Գաղան, 3 Աւաղակ, 1 Ոռնու՛մ, 2 Թուլու՛մաճի, 1 Վատ, 2 Սրիկա, 1 Յայտնի լրտես, 2 Գաւաճան, 2 Հրէշ, 2 Յաճ, 1 Անմո՛թ, 2 Խայտառակ, 1 Սեղած երես, 1 Մանտա տապաճի, 1 Դիմաւ կաւոր, 1 Պոռնկամիտ, 1 Պոռնկանոց, 1 Գոմէշ, 1 Էշ և 1 Արշ իլէրի:

(Տե՛ս Հարժու՛մ թիւ 226)

Բոժոժիկ. — Վսեմ գաղափարներու օգկան թերթն ալ ասանկ կըլլայ, այնպէս չէ՞...:

ՇԱՅԻ ՊԱԼԱՏԻՆ ՄԵԶ ՀԱՅԵՐՈՒՆ ՏՈՒԱԾ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

Թէհրան 12 Ապրիլ 1900

«Այո տարի ես տեղի ունեցան Թէհրանի Հայոց Թատերասիրաց Ընկերութեան ներկայացումները, որոնք շատ յաջող անցան:

Վարժարանի հոգաբարձութիւնը՝ որուն կ'ատենապետէ Շահին անձնական թարգման Յովհաննէս Խան Մասեհեանց, հրաման տալով Շահէն որ իր ներկայութեանն ալ ներկայացում մը տրուի և մարա 25ի ուրբաթ գիշերուան համար պատրաստութիւն տեսնուելով, յաջող ներկայացում մը տրուեցաւ պալատին մէջ Պարսկերէն լեզուաւ: Երբ Շահը թատերասրահը մտաւ, պալատական բարձրատիճան պաշտօնատարներով, անմիջապէս վարադոյրը բացուելով խաղը սկսաւ որ տեւեց 2 ու կէս ժամ: Խաղին աւարտելէն ետքը Շահը հաճեցաւ խօսք ուղղել դերասաններուն, իր գոհունակութիւնը յայտնելով, և միանգամայն անոնց անուններու ցուցակը ուղեց: Երկու դերասանահիներուն համար հրամայեց մէյմէկ խաւ շալ նուիրել, և երբ խմացաւ թէ երկուքս դերասանաց ամենքն ալ Հայոց վարժարանի նախկին ու ներկայ աշակերտներն են, հաճեցաւ հրամայել որ ութ հարիւր թուման (4000 ֆր.) շնորհուի վարժարանին: (Մէկ թումանը 5 ֆր. է):

Երկրորդ ներկայացում մըն ալ տրուեցաւ Մեծ Վէլիբին հովանաւորութեամբը, Պարսկաց և Եւրոպացիներու համար, Հայոց վարժարանի թատերասրահին մէջ. այդ ներկայացումն ալ շատ յաջող անցաւ: Տոմարները ըստ կամս էր: Բոլոր դերասանները գրամական նուէրներ տուին, որով ընդհատայն գոյացաւ երեք հազար թուման (15,000 ֆրանք). ուրիշ զեւելելով մօտաւորապէս երեք հարիւր թուման ծախք, կը մնայ զուտ հասոյթ 2700 թուման: Այս գումարը աւելցնելով նախորդներուն վրայ, հիմա Թէհրանի Հայոց վարժարանը ունի եօթը հազար թուման, (35,000 ֆր.) որ միշտ անձեռնմխելի է, և կը ծառայէ մի միայն դպրոցին բարեկարգութեան և ծախքերը հոգալու:»

Արեւիկ

ԶԱՆԱԶԱՆՔ

Երաժշտական երեւեջատու արքա. — Ընթերցող արքունակ. — Առողջապահները բան մը չեն խնայեր ախորժելի ըլլալու համար չարչարուող մարդկութեան: Եւ ասոր համար կը գիմնեն քիմիադետներու բնագետներու օգնութեան և նոյն իսկ երաժշտներու Պատուական գաղաքար, որովհետեւ երաժշտութիւնը, ինչպէս կըսեն, ցաւերու ամփոխէ: Զիպիտի զամանաք անշուշտ երբ բանք թէ գիտը Ամբրիկայէն է: Երաժշտական երեւեջատութիւնն ալ մըն է, զարմանալի բաղկաւոր մը: Այս ամօռին մէջ, մարդ նստած, հանդիստ հանդիստ կ'օրօրուի, բայց օրուելու միջոցին՝ ազդեցութիւնը կը կրէ երկու ձողերու, որոնք փքոցներու միջոցաւ օդը կը ճնշեն ամօռին վերի մասին մէջ գրուած ընդունարանին մէջ: Զաւանակներ ալ, փոխադարձաբար ձողերը գէպի ետեւ կը տանին այնպէս որ գործողութիւնը կարելի է երկարել, որչափ որ ուզուի: Հնարիչին առաջին մտածումն եղաւ, այս եղանակաւ ճնշելով օդը օդատար ընել, ամօռը չըջապատող միջոցաւ զովայնելու, սակայն մեղամաղձոտ մը թեւալ բուսաւ: Ընդունարանին նէջ գնելու երաժշտական տուի մըն ալ, այնպէս որ օր ճնշումը կարենայ դարձնել գործիքին կոթը ու գործիքը սկսի երկել այն ատեն ամենէն անուշ ու ախորժալուր եղանակները, և թերային աշխարհներու մէջ տանելով օրօրուողը:

Հիմա գործիքը աւելի կատարեալ ընելու համար, երաժշտական տուիին կը կցեն նաեւ ձայնաւոր (Փօնօկրաւ) մը որ ծանօթ եղանակներ կը նուագէ, կամ օրուողին կը կարգայ դրական ընտիր կտորներ, սկսեալ Հիկոյէն մինչեւ Զօլա կամ Շէյքսպիրէն մինչեւ Պայրըն: Այսպէս, զարմանալի առաքինութեամբ մ'օժտեալ այս գործիքը՝ միւրտուած է Ընթերցող-ամօռ անուամբ:

Պ.

Թէյ — Բարեղի բժշկական վարժարանի ուսուցիչներէ մին քննութեամբ հաստատած է որ, թէյը եթէ թեթեւ եփուի ու տաք խմուի, մարազութեան գիւրութեանը կը նպաստէ, մինչդեռ սուրճը կը գժուարացնէ մարսողական գործողութիւնը:



ՅԱՆԴԻՄԱՆ ՈՒԹԻՒՆ.

Առ Մխսիս Մ. Ֆրէսքրեան

Մայիսի առտուն կանուխ արթնցայ,
Լոսն ու շաճախը չէր նեւած սահա.
Պիթիսն խրճմեքներս քրի. ընցայ,
Դրոյսս սանձեցի, վրաս հագունցայ:

Գացի նսեցայ քեզի բենձիրեն,
Բի գաս նե՛ հեմեն քու դեմըդ վազեմ.
Մայիսը երթանք հեքոյ չեմն ընենք,
Խաղանք ու խնդանք, ուսենք ու խնենք:

Շաքարներ առաջ խօսք տուած էիր,
Հեքոս պարապար պիտի ընայիր.
Պեքի՛, հա՛ պեքի՛, աչ եղաւ հոգիս,
Հասկըցայ, արթիս դուն գալիք չունիս:

Սահաքը զարկաւ տար տարւնքնէկ,
Սեղենիս կապած՝ մենք քեզ պեքի՛ցէնք.
Ճարերնիս հասաւ, աչ ինկանք ճարաւ,
Նե՛վենիս առինք յիսրահիմ աղա:

Յանցաւորի պէս ձիսքս ծոռ նըսած,
Չորս դիս նայելոյ խենդ հաւ եմ դարձած.
Աշխարհիք իմ աչիս պիթիսն սեղեր եր,
Խօսք տալ ու չի գալ, աճապ կը վայելե՛ր:

Ամօք է, ամօք, ասանկ խօսք կուտաւ,
Չէ նե՛ մի եղեր քիթիս կը խնդաւ.
Փախաք գիտցիր ու քու էյլենձեդ չեմ,
Ասու՛ աչ ճարը կը գնաւ հեմեն:

Հայտե մայիսը ասանկուկ անցնի,
Փախաք չիճակ է եկող հիկզաքքի.
Էյեր ան օրն աչ հեքոս դուրս չեղես,
Ճեպիկիդ խորճըլք՝ բասյումըս կառնես:

ԻՆԴՈՍ

Երկու բարեկամք՝ գերեզմանատան մէջ.

— Հոս մէկը ունի՛ք հանգուցեալ.

— Այո՛, ձեզի օրեր, զբաւնջս թաղուած է:

— Պէտք է չի մոռնալ զայն.

— Մոռնալ մի՛... ամեն մեռելոցի օրեր կանոնաւորապէս կուգամ անոր գերեզմանի արձանագրութիւնը կարդալ, վստահ ըլլալու համար թէ իրօք մեռած է:

Ազահն ու Մուրացիկը

Մ. — Տէր իմ, շնորհ ըրէ՛ք, սղորմեցէ՛ք.

Ա. — Հէ՞... .

Մ. — Նայեցէ՛ք, թեւ կորսնցուցած եմ.

Ա. — Ուրեմն լրագրագետի մը գիմնեցէ՛ք եւ ծանուցում մը տուէ՛ք որ թեւերնիդ գտնէ՛ք.

Հիւանդն ու Բժիշկը

— Ո՛հ, Պ. Բժիշկ. արդեօք քանի՞ օրէն կրնամ աչէկնալ.

— Մինչեւ երկու ամիս կրնաք անկողինը ձգել, իսկ անկէ վերջն ալ առնուաղն տարի մը խնամուելու պէտք ունիք.

— Ինչ կըսես տօքթօս, չըսես թէ կործանեցայ, մեռայ:

— Ինչո՞ւ.

— Որովհետեւ ես պարզ թերզի մըն եմ, ինչ պիտի ընեմ.

— Պարզ թերզի մի՛... . ուրեմն անհոգ եղիք, քիչ օրէն կ'աղեկնաք... . ես չքեզ սեղանաւոր կ'արժեցի:

Երկու օրիորդներ.

— Մառի, ինչէ՞ն հասկցար թէ այդ նրիտա-սարդը քեզ պիտի առնէ. ի՞նչ հաւաստիք ունիս իր սէրը յայտնեց քեզի.

— Ահ, ատկէ աւելին ալ ըրաւ... . հօրս ունեցած հարստութեան վրայ մանրամասն տեղեկութիւններ հաւաքած է:

Երկու պզտիկ օրիորդներ իրենց մայրերու բարեմասնութեանցը վրայ կը վիճաբանէին. ա-նոնցմէ մէկը ըսաւ.

— Հը՛մ... . իմ մայրիկս անանկ բան մըն ալ գիտէ որ ուրիշ մայրիկներ չեն կրնար ընել:

— Ի՞նչ.

— Մէկ ձեռքով ամբողջ ակռաները կը հանէ ու նորէն տնիւր կը դնէ:

ԲԵԼՄԷԼ

Ժողովրդային ՏՐՏՈՒՆՁՆԵՐ

ՉԵՆՔ ՀԱՒԱՏԱՐ...

Եթէ ըսեն թէ Օրմանեան իր հրաժարականներովը ազգին տեսական օգուտ մը պիտի կրնայ ձեռք բերել՝ չենք հաւատար:

Եթէ պնդեն թէ Անգլիա Թրանսօվալն ու Օռան-ժը առանց շահու ակնկալութեան կը զարնէ, չենք հաւատար:

Եթէ ըսեն թէ աշխարհի խաղաղութիւնը պահելու փափաք ունեցողները այդ խաղաղութիւնը վրդովողներուն առաջինը չպիտի ըլլան՝ չենք հաւատար:

Եթէ ըսեն թէ քաղաքակիրթ Եւրոպա կ'ուզէ Թուրքիան բարեկարգուած տեսնել՝ չենք հաւատար:

Եթէ ըսեն թէ յեղափոխականները պիտի միանան ու եղբայրասպան եւ հայրենաւեր կոխը պիտի դադրի՝ չենք հաւատար:

Եթէ ըսեն թէ յեղափոխութիւնը շահագործողներ չի կրնա՝ չենք հաւատար:

Եթէ ըսեն թէ առանց դրամի մտուոր ու բարոյական յառկութիւնները ներկային մէջ բան մը կարժեն՝ չենք հաւատար:

Եթէ ըսեն թէ մեր երկու կիսաշաբաթերթերուն միւլեդին կոխը դիւրութեամբ կրնայ վերջանալ՝ չենք հաւատար:

Եթէ ըսեն թէ աշխարհի մէջ գոնէ որբիկներուն հացին դպչողներ չեն ըլլար՝ չենք հաւատար:

Եթէ ըսեն թէ հայհոյախօսութիւնը հայ դրականութեան մէջ իր տեղը չպիտի ունենայ՝ չենք հաւատար:

ՁՈՒԹԱԿ

Բոժ. — Եթէ ըսեն թէ հրապարակի վրայ երեցող արգի կարգ մը ազտութիւնները առանց խարաղանի միայն պատուոյ ատեաններով հիմնապէս կը մարքոտին, ամենեւին չենք հաւատար:

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ

(Աժանս Բոժոժիկ եւ Ընկ.)

Բզրաճապ

Ազգին մէջ նմանը չտեսնուած Գ. պէրկիւզարը՝ Տօքթ. Պօչաւոր Մանդարաբանին հետ խուռու խահուէճի խանութ մը բացին, տնօրէնութեամբ

խաբէս խուբէս խմբակի գործակատար միւսիւ Անվարտիօֆի, որ խահուէին հետ խառնուելիք լէպլէպին, բակլան կամ նօհուտը գիշերները մութատեն խանութ պիտի կրէ:

Քէօշէ — պուճախ ակմբոց մէջ կըսուի թէ աստուածպետական ծանուցումով մը ժողովուրդը պիտի հրաւիրուի սոյն թահմիզէն առուաւոր ընելու:

Մարիճա գետ

Մայիս 2ին ազգ. վարժարանաց երկսեռ ուսանողք եւ մանկապարտէզի փոքրիկները տապանակ ուխտով քաղաքէս ԵՐԵՎ ժամ հեռու զբօսավայր մը տարուեցան, արիւն քրտինք մտած, հանդերձ տէր քօնեաքով ու տիրացու պիրայով: Այն ինչ ուսուցիչք խուղիին քէպապը կուտէին ու աշակերտք ալ հեռուն կեցած Թուքերնին կը կըլլէին, Բնական գիտութեան դասատուն՝ որուն գըլուխը գարեջուրի շոգիով բաւական տաքցած էր, պաստօնի հարուածով մը տղու մը ճակտէն արիւն առաւ (մայիս ըլլալուն պատճառաւ), որով ուսուցչական ճիւղնայիշը քիթէ բերնէ եկաւ: Խեղճ ուսանողները այնչափ հեռաւոր վայր մը երթալ գալէ այն աստիճան յոգնած էին որ իրենցմէ շատերը կէս ճամբան մնացին ու ծնողքներէ ումանք կառքեր վարձելով գացին զաւկներնին տուն բերին: Գիւրին է երեակայել ծնողաց սիրտ հատնումը, իրենց զաւակաց կէս գիշերուան մօտ վերագառնալնուն առթիւ:

Քամշաթ քա

Խանութպան երկու ողղաւիճ ընկերներ որ միշտ երգումով կը ջանային իրար համոզել թէ գործին մէջ հաւատարմաբար կաշխատին, մինչ ընդհակառակը իրարու մասիկ ընելէ ամենեւին չէին դադրեր, ասոնք վերջապէս զիրար գիմակաղուրկ ըրին ու որոշեցին երգումը եկեղեցիին մէջ ընել, յուսալով որ ատով պիտի կարենան իրարու աչքի թօղ փչել, վառն զի գիտէին թէ «խույլու խույլունտան վաղ կէջմէզ» կըսէր Թուրք առածը:

Ն. ԿԱՐ ՀԱՆՈՒԿ

«Հայելի» ի 161 թղ. Թուոյն Նկարհանուկը կարգալ այսպէս:

«Ամեն տեսակ օչարակէ աւելի աղէկ է հին գինին», զոր անսխալ կարգացին. Տ. Լեոն ճգնաւորեան. Ն. Գարապաճազեան. Գ. Արապեան եւ Թիւ 1181 Վառնայէն: Վահան Հալնունի Շուրլայէն եւ Վ. Քիրիշեան Փ. Պոլսէն:

Отговорникъ М. Сконевъ
Печатница „Взаимность“ — Варна.